Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թ.
օգոստոսի 6-ի նիստի N 37
արձանագրային որոշման

Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՐԶԱԲՆԱԿ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

№	Գործողությունը	Պատասխանատու կառույցը	Համագործակից կառույցը (կառույցները)	Իրականաց-ման ժամկետները	Ֆինանսավորման աղբյուրները
1.	Մարզաբնակ երիտասարդների խնդիրներին առնչվող տեղեկատվական ծրագրերի կազմակերպում և լուսաբանում www.eritasard.am կայքով	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	պետական կառավարման մարմիններ	2015-2017 թթ.	ՀՀ օրենքով չարգելված միջոցներ
2.	Մարզաբնակ երիտասարդների իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում, երիտասարդական ՀԿ-ների, երիտասարդների ակտիվ խմբերի մասնակցությամբ արդի խնդիրների վերաբերյալ քննարկումների կազմակերպում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2015-2017 թթ.	ՀՀ օրենքով չարգելված միջոցներ
3.	Ուսուցման կազմակերպում՝ ուղղված մարզերում գործող երիտասարդական հասարակական	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ մարզպետարաններ, մարզերում գործող հասարակական	2015-2017 թթ.	ՀՀ օրենքով չարգելված միջոցներ

	կազմակերպությունների կարողությունների և հմտությունների զարգացմանը		կազմակերպություններ (համաձայնությամբ)		
4.	Մարզպետներին կից երիտասարդական խորհուրդներին, ՀՀ մարզպետարանների աշխատակազմերի համապատասխան մասնագետներին, երիտասարդական ՀԿ-ներին, երիտասարդներին ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության, երիտասարդներին առնչվող ՀՀ պետական ծրագրերի, միջազգային երիտասարդական ծրագրերի ներկայացում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	պետական կառավարման մարմիններ	2015-2017 թթ.	ՀՀ օրենքով չարգելված միջոցներ
5.	Մարզաբնակ երիտասարդության, այդ թվում հաշմանդամ երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնա-գիտություններ ընտրելու ուղղությամբ սեմինարների կազմակերպում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ մարզպետարաններ մարզերում գործող հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	2015-2017 թթ.	ՀՀ օրենքով չարգելված միջոցներ
6.	ՀՀ մարզերում երիտասարդների ինքնազբաղվածության խթանման, բիզնես սկսելու և վարելու հմտությունների զարգացմանն ուղղված միջոցառումների, ծրագրերի իրականացում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ մարզպետարաններ	2015-2017 թթ.	ՀՀ օրենքով չարգելված միջոցներ

7.	Մարզաբնակ երիտասարդների համար ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, սեռավարակների, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, ալկոհոլի օգտագործման և այլ վնասակար սովորությունների կանխարգելմանն ուղղված, ինչպես նաև վերարտադրողական առողջության վերաբերյալ միջոցառումների իրականացում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ առողջապահության նախարարություն	2015-2017 թթ.	ՀՀ օրենքով չարգելված միջոցներ
8.	Մարզաբնակ երիտասարդության շրջանում հակածխախոտային միջոցառումների կազմակերպում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ առողջապահության նախարարություն	2016-2017 թթ.	ՀՀ օրենքով չարգելված միջոցներ
9.	Մարզաբնակ երիտասարդության շրջանում թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված քարոզչական միջոցառումների կազմակերպում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն		2015-2017 թթ.	ՀՀ օրենքով չարգելված միջոցներ
10.	Մարզաբնակ երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակությանն ուղղված միջոցառումների իրականացում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ պաշտպանության նախարարություն	2015-2017 թթ.	ՀՀ օրենքով չարգելված միջոցներ